

չահամ, լեռնաբուղի աղբերակօք եւ երփնագեղ
գոյնզգոյն բազմորակ ծաղկօք չքնաղապէս պարըս-
պաւորեալ, որպէս զլծագ լուսապաճոյճ՝ կերտեալ
ձեռամբ Արփիաւորչին մերոյ ի վերայ ամենասուրբ
նշխարաց Սրբոյն Յօննէի եւ յանուն նորա, որ
զկնի Տեառն Մօր՝ է՛ պարծանք եւ գագաթն սրբոց
ամենից եւ փեսայ յարեւելից բազմեալ ի լեռնոս
Քարբէոյ, ձայն բարբառոյ եւ Մկրտիչ Քրիստոսի,
քաղցրահնչօղ գարնան տատրակ հրաշիւք յամոյ
ծնեալ՝ որդին Չաքարիայի քահանային եւ օրհ-
նեալ պառաւոյն Եղիսաբեթի, Յովհաննէս Մեծն
եւ փառաւորն՝:

Այլ զՄարաց (= Քրդաց) անգութ լինելն եւ
զարիւնս մեր ծծելն՝ անասելի է: Քանզի՝ սատանայ,
որ ընիկ ներհակն է բարեկարգութեան, ի մարտ ընդ
Սրբոյ Տանն այնորիկ իւրովքն համախոհիւք. որք
գիշատէին զմեզ, նեղէին եւ տառապէին, ի մայրս եւ
ի ծերպս վիմաց փախստական առնելով մաշէին զմեր
կեանս, եւ ընուն զլսելիս մեր գառնակսկիծ բանիւ:

Իսկ զպարտատեարց զանցագ եւ զանիրաւա-
պէս տուժումն՝ ի գիր ոչ կարեմք արկանել. նաեւ
զմեր ողորմելի լինելն ի դրունս այլասեռից եւ ոմանց
գիւղօրէից: Եւ զայս ոչ միայն յանհաւատից կրէաք,
այլ եւ ի մեր աղօթ, որպէս է բարձր մեր՝: Զի յորժամ

1 Մշու Սուլթան Ս. Կարապետը, ամենայարգի Սուրբ
մ'է: Ամենէն առաջին սուրբի տօնը, զոր Լուսաւորչի Հաս-
տատեց, Ս. Կարապետինն է: Ս. Կարապետ Զաւլը կամ
Զաւլ Բիւլե-է կամ Զաւլ Ժանաթը անունով, քրիստոնէին
եւ ոչ-քրիստոնէին համար սրբապայր մըն է Լուսաւորչի ժա-
մանակէն ի վեր: Լուսաւորչին կարգադրութեամբ միշտ
Նաւասարդի մէջ, Վարդափառին կը տօնուի Ս. Կարապետի
տօնը աշխարհախումբ բազմութեամբ:

2 Սարսափելի կսկիծով կ'արձանագրէ Կոլոտ այն նե-
ղութիւնները, զոր այլազգիներէն աւելի համազգիները կու-
տային իրենց: Ս. Կարապետ լա՛տ բան տուժած է իրաւի հա-
մազգիներու փնասէն: